ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ 55-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

Գրեց՝ ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

I
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Եթէ համաշխարհային հանճարները, որպիսիք են Սոֆոկլէս, Շէքսպիր, Վիկտոր Հիւգօ, Շիլլեր եւայլն՝ միջավայրի եւ իրենց ապրած ժամանակի ու սոցիալական պայմանների ազդեցութեան տակ են ստեղծագործել, ե՛ւս առաւել փոքր ազգերի տաղանդներն են միշտ ենթակայ եղել իրենց ազգային միջավայրի ուրոյն պայմաններին: Որքան էլ ուժեղ անհատականութիւնով օժտուած լինին արուեստագէտները, այնուամենայնիւ նրանք արտադրում եւ ստեղծագործում են որոշ ժամանակի եւ հասարակական որոշ հանգամանքների շրջանակում՝ համապատասխան իրենց հոգեկան եւ նիւթական կարողութեան:

Այդ կողմից բնաւ բացառութիւն չի կազմում Տրտունջների եւ Հեծեծանքների անզուգական երգիչ Պետրոս Դուրեանը, որի ծննդեան 75 եւ մահուան 55 ամեակն արդէն լրացած է:

«Իւսկիւտարի սոխակը», այսպէս էին կոչում Դուրեանին իր ժամանակակիցները, ծընուել է Պոլսում 1852 թուի Մայիս 20-ին*), Բոսփորի գեղածիծաղ ափերին, հին Բիւզանդիոնի ատաղալից երկնքի տակ: Այդ ժամանակ Կ. Պոլիսը տաճկահայերի մտաւոր, քաղաքական եւ առեւտրական կենդրոնն էր եւ աշխարհիս ամենահայաշատ քաղաքը:

Բաւական է յիշատակել, որ հայկական տպագրութիւնը Պոլիս մտաւ Աբգար դպրի եւ Առաքել աբեղայի շնորհիւ տակաւին 1567 թուին, իսկ Պոլսի վրայով բացուել էին Թուրքիայի հայերի համար Եւրոպայի քաղաքակրթութեան դռները:

Ինչպէս ռուսահայ ուսումնածարաւ երիտասարդները դիմում էին արտասահման, գըլխաւորապէս Դորպատ եւ կրթւում էին ռուսական, ապա գերմանական դրականութեան եւ քաղաքակրթութեան ազդեցութեամբ, այնպէս էլ տաճկահայերը, գլխաւորապէս պոլսահայերը, շարան-շարան գնում էին Ֆրանսա կամ Իտալիա, ուր եւ ենթարկւում էին այդ ազգերի դրականութեանը, գլխաւորապէս Ֆրանսականին, որից եւ շատ թարգմանութիւններ են կատարում: Մինչդեռ ռուսահայերը հիմնում են Մոսկուայի Լազարեան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, ապա մի շարք թեմական դպրոցներ, տաճկահայերն էլ բաց են անում միջնակարգ դպրոցներ Պոլսում, Փարիզում եւ Պադուայում. յայտնի էին Մուրատեան եւ Ռաֆայէլեան դպրոցները, որ բաց էին արել հայ կաթոլիկ Մխիթարեանները՝ շնորհիւ հնդկահայ մի քանի հարուստների առատ նուիրաբերութեան: Այդ դպրոցներում իշխում էր ի հարկէ ժամանակի ոգին, որ կրօնական էր, իսկ լեզուն՝ գրաբար. մի դրական կողմ ունէին սակայն այդ վարժարանները. այդ այն էր, որ աւանդում էին ե՛ւ ազգային պատմութիւն:

Մինչդեռ Ռուսաստանում վաթսունական թուի անմոռանալի օրերն էին դարբնւում, ազատագրւում էին ճորտերը, վերածնւում էր ռուս մեծ ժողովուրդը, իսկ ռուսահայերը նոր աշխարհաբար լեզուով դրականութիւն էին ստեղծում, Խաչատուր Աբովեանը գրել էր իր անմահ «Վէրք Հայաստանի», իսկ Ստեփաննոս Նազարեանը լոյս էր ընծայում «Հիւսիսափայլ»ը եւ մեր անզուգական հրապարակախօս Միքայէլ Նալբանդեանի հետ միասին ուժգին պայքար էր մղում պահպանողական բանակի դէմ, այդ նո՛յն ժամանակ տաճկահայ առաջնակարգ մտածողները՝ տոգորուած Ֆրանսական մեծ յեղափոխութեան սկզբունքներով՝ մարտնչում էին ազգային-պահպանողականների դէմ: Տեղի էր ունենում հների եւ նորերի ուժգին պայքարը եւ ի պատիւ հայ ժողովրդի՝ թէ՛ Ռուսահա-

*) Ծննդեան թուականի մասին տարաձայնութիւն կայ. ոմանք 1851 թիւն են ընդունում: